5-8/ 96/ 2023

Ortr

ORER\ DNY \ - Arménsko - evropský časopis
Armenian European Magazine | Եվրոպական անկախ ամսագիր

Հայագիտությունը Եվրոպայում
Armenian Studies in Europe

Հայագիտության նվիրյալ նահապետը.

Լեւոն Արքեպիսկոպոս Զէքիեան

«Մխիթարը եղած է բովանդակ կեանքիս ներշնչումի ակնաղբիւրը եւ հիմնական ուղեցոյցը»

Եվրոպայի հայագիտական կրթության հիսունից ավելի մշակների բացառիկ հարցազրույցները ՕՐԵՐ-ի այս համարում

Freie Universität Berlin

GWZO Leibniz Institute for the History and Culture of Eastern Europe

GERDA HENKEL STIFTUNG

ԱՆԻ՝ ԿՈՐՍՎԱԾ ՔԱՂԱՔԸ նախագիծը

Ներկայացնում են նախագծի հեղինակները՝ Կարէն Ձալլաթեանը եւ Կոնրադ Սիեկիերսկին

-Ո՞րն է «Անի՝ կորսված քաղաքը» նախագծի բովանդակությունը:

-«Անի՝ կորսված քաղաքը» միջկրթանքային հետազոտական ընթացիկ ծրագիր է, որն իրականացվում է Եվրոպայում հայագետների կողմից: Ծրագիրը ֆինանսավորում է Գերդա Հենկել Հիմնադրամը և ընդգրկում է Լայպցիգի Արևելյան Եվրոպայի Պատմության և Մշակույթի Լայբնիցի Հիմնարկը (GWZO) ինչպես նաեւ Բեռլինի Ազատ Համալսարանը:
Միջնադարյան հայկական թագավորության մայրաքաղաք Անին եղել է քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացած կենտրոն, որը դարերի ընթացքում խորհրդանշել է հայկական պետականությունը: Հայկական պատկերացման մեջ և նրա սահմաններից դուրս կորսված քաղաք Անին իրական վայրից վերածվել է երևակայականի՝ դառնալով մնայուն մշակութային պատկերակ (icon), որին հղվել են հայ գրողների սերունդները 10-րդ դարից մինչև մեր օրերը: Կլոդ Մութաֆյանի խոսքերով, մայրաքաղաքը հիշեցնում է մի փյունիկ, որը կրկին ու կրկին դիտվել է որպես հայկական մշակույթի, ավանդույթների և պատմության կարևորագույն կենտրոն: Հետևաբար, Անիի վերաբերյալ միջնադարի համագիրում բազմաթիվ հետազոտություններ կան, սակայն վերջին ժամանակներում բավարար ուշադրություն չի դարձվում այս կորսված քաղաքի ընկալմանը: Գտնվելով Թուրքիայի արևելքում՝ Հայաստանի հետ փակ սահմանագծին, Անին ծառայել է որպես տարբեր ինքնությունների աղբյուր Հայաստանում և հայկական սփյուռքում՝ կրելով ոչ միանշանակ արժեքներ օսմանյան և ներկայիս թուրքական ներքուստ բազմազան հասարակություններում և լինելով ուսումնասիրության դժվար առարկա մի շարք գիտական կրթանքների համար:

Այս նախագիծը նպատակ ունի անդրադառնալ կորսված Անի քաղաքի ստեղծած բարդ համադրություններին՝ փնտրելով հետևյալ հիմնական հետազոտական հարցերի պատասխանները. *որո՞նք են այն հարացույցները, որոնց միջոցով հայկական մշակույթը՝ որպես ազգ պետություն և որպես սփյուռք, Օսմանյան կայսրությունն ու Թուրքիան հարաբերվել և հարաբերվում են կորսված Անիի հետ: Որո՞նք են կորսված Անի քաղաքից ազդված հիշողության այս ոլորտների ներքին կառուցվածքներն ու շարժաբանությունը (դինամիկան): Ինչպե՞ս են այս ոլորտները առնչվում միմյանց հետ:*

- Ովքե՞ր են ներգրավված նախագծում:

- Բալինտ Կովաչը՝ այս նախագծի գլխավոր հետազոտողը, պատմաբան է և Բուդապեշտի Պիտեր Պազմանի Կաթողիկ Համալսարանի Հայագիտության ամբիոնի վարիչ: Հրատարակել է Անիի և Արևելյան-Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի «Անի-հայերի» պատմության վերաբերյալ Մինաս Բժշկյանի ուղեգրության գերմաներեն ծանոթագրված թարգմանությունը (Kovncs 2019): Գերմանական և հայկական հրատարակություններում նա ուսումնասիրել է Անիի հիշողության հայեցակարգային հիմքերը 19-րդ դարի սփյուռքի հասարակություններում (Kovncs 2015):
Էլկե Հարթմանը՝ ով նույնպես նախագծի գլխավոր հետազոտողներից է, իսլամագետ ու օսմանագետ-պատմաբան է: Նա Բեռլինի Ազատ Համալսարանի Օսմանագիտության և Թուրքագիտության ամբիոնի վարիչն է: Պրոֆեսոր Հարթմանը հիմնել է «Յուշամատեան» նախագիծը, որը նվիրված է հայկական քաղաքային և գյուղական կյանքի վերականգնմանը օսմանյան հասարակությունում հիմնականում ընտանեկան արխիվների, ինչպես նաև հայկական «յուշամատեանների» միջոցով (**www.houshamadyan.org**): Նրա հետազոտությունները կենտրոնանում են ինքնակենսագրական աղբյուրների թեմաների, ընկալումների պատմության, lieux de mémoires-ի (հիշողության վայրեր) վերակառուցման և վերաաշխուժացման օրինաչափությունների, կորցրած վայրերի, Հայոց ցեղասպանությունից հետո օսմանյան

հայերի կորսված կյանքի աշխարհի վրա (Hartmann 2021, 2018): Պրոֆեսոր Հարթմանի հսկողության ներքո Բեռլինի Ազատ Համալսարանի Օսմանյան և Թուրքագիտության բաժնում մեկ ասպիրանտ աշխատում է կորսված Անի քաղաքի քրդական և թուրքական ընդունելության վրա: **Կարէն Ձալլաթեանը** նախագծի գլխավոր հետազոտողներից է: Նա ուսումնասիրում է ժամանակակից հայկական սփյուռքի շարժաբանությունը՝ ի նկատի առնելով Հայաստանի ու ավելի լայն աշխարհի հետ առնչությունները և ծանոթ է Հայաստանի գրական և մշակութային զարգացումներին: Դոկտոր Ձալլաթեանը հրապարակել է աշխատություններ սփյուռքահայ ֆիլմարտադրության, մասնավորապես Ատոմ Էգոյանի մասին (Jallatyan 2017, 2020): Նրա հրատարակման ընթացքին մեջ գտնվող էսսեները մեկ այլ կարևոր սփյուռքահայ կինոռեժիսոր Կարինե Թորոսյանի, ինչպես նաև սփյուռքահայ նշանավոր բանաստեղծ, քննադատ և հասարակական մտավորական գործիչ Վահէ Օշականի (1922-2000) գործերի միջով վերլուծում են հայկական սփյուռքին համապատասխան ապատարածքայնացման շարժաբանությունը: Դոկտոր Ձալլաթեանն ուսումնասիրում է Անիի հիշողությունը՝ որպես կորսված քաղաք, 19-րդ դարից սկսած հայերեն (արևելյան և արևմտյան) գրված թատրոնում, պոեզիայում և արձակում, ինչպես նաև ճանապարհորդական գրականության և տեսողական վերկայացման մեջ:


Կարէն Ձալլաթեան


Կոնրադ Սիեկիերսկի

Կոնրադ Սիեկիերսկին նախագծի երկրորդ հիմնական հետազոտողն է: Նրա թեկնածուական ատենախոսությունը ժամանակակից հայ մշակույթում ուխտագնացության թեմայով է, որը նա ներկայացրել է Լոնդոնի Քինգս Քոլեջի Աստվածաբանության և Կրոնագիտության ամբիոնում: Որպես մշակութային մարդաբան, նա հետազոտություններ է կատարել Հայաստանում և հայկական սփյուռքում հայկական ինքնության, հիշողության, կրոնականության և նյութական մշակույթի թեմաներով: Նրա ամենաթարմ նախագծերից են ուսումնասիրություններ հայկական կրոնական ձեռագրերի, ինչպես նաև վաղ տպագիր կրոնական գրքերի և մագաղաթների պաշտամունքի մասին: Սիեկիերսկին խմբագրել է «Հայաստան. ժամանակակից մշակույթ մարդաբանական տեսանկյունից» (2014 թ.) և «Հայերը հետսոցիալիստական Եվրոպայում» (2016 թ.) աշխատանքները և լայնորեն հրատարակվել է գրախոսվող ակադեմիական ամսագրերում և հատորներում:


ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆ

ԱՆԻՆ ԾԱԽՈՒԵՑԱԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1034–1064)

1910

- Ի՞նչ ծրագրեր ունեք «Անի՝ կորսված քաղաքը» հետազոտական նախագծի վերաբերյալ:

- 2023 թվականի դեկտեմբերի սկզբին կազմակերպելու ենք «Անի՝ կորսված քաղաքը» նախագծի բացման աշխատաժողովը: Այն կանցկացվի Բեռլինում: Բացի հիմնական հետազոտողներից, այն կներառի գիտնականների միջազգային խմբի և ասպիրանտների: Մեր երկարաժամկետ նպատակն է կազմակերպել միջազգային գիտաժողովներ, հրապարակել հոդվածներ և խմբագրել համապատասխան թեմաներով հատորներ: Այս կերպ մենք հույս ունենք ուշադրություն հրավիրել Անիի՝ որպես կորսված քաղաք, հիշողության շարժաբանության վրա: Սա իր հերթին կարող է օգնել մեզ ավելի լավ պատկերացնել հիշողության, անցյալի և մշակութային ժառանգության տարբեր ձևերի ժամանակակից հարաբերությունները ընդհանրապես՝ ազգային ու սփյուռքյան համագրերում:

Նմուշ 1. *Բագրատ Այվազյանցի «Անին ծախուեցաւ» պատմավեպի տիտղոսաթերթը, որի իրադարձությունները տեղի են ունենում 11-րդ դարի Անիում եւ որը հրատարակվել է Կոստանդնուպոլսում 1910 թվականին: Այս հատորը հայտնաբերվել է Փարիզի «Նուպարեան» գրադարանում, 2023 թվականին՝ ամառային հետազոտության ժամանակ:*

Նմուշ 2. *20-րդ դարի սկզբին գրված ականավոր պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյան) «Անի» պատմական ուղեգրության 1946 թվականի Երևանում խմբագրված հրատարակության տիտղոսաթերթը: Այս հատորը հայտնաբերվել է Փարիզի «Նուպարեան» գրադարանում, 2023 թվականին՝ ամառային հետազոտության ժամանակ:*



ՕՐԵՐ